# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**01.11.2025թ. կնքված N ՍՀԱՊԱԹ-ԳՀԾՁԲ-2026-1/Մ «Պետության կարիքների համար հսկողության ծառայության մատուցման պետական գնման» պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

Գ. Արաքս « 12 » փետրվարի 2026թ.

« Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան » ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Կ. Փահլևանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «Էլիտ Սեքյուրիթի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 01.11.2025թ. կնքված N ՍՀԱՊԱԹ-ԳՀԾՁԲ-2026-1/Մ «Պետության կարիքների համար հսկողության ծառայության մատուցման պետական գնման» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի N 2 հավելվածը խմբագրել նոր բովանդակությամբ՝ համաձայն հավելվածի:

1.2 Պատվիրատուն իրեն մատուցված ծառայության դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով, սույն համաձայնագրի հավելվածին՝ վճարման ժամանակացույցին համապատասխան:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2026թ. ավարտը: Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի գործողությունը տարածվում է 01 հունվարի 2026թ. հետո ծագած հարաբերությունների /մատուցված ծառայությունների/ վրա:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.5 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **«Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» ՊՈԱԿ** | **«Էլիտ Սեքյուրիթի» ՍՊԸ** |
| Արմավիրի մարզ, գ. Արաքս | ՀՀ Արմավիրի մարզ, Կոմիտաս փ. 22տ. |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Արարատբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900338000558 | Հ/Հ 1510066594955900 |
| ՀՎՀՀ 04401986 | ՀՎՀՀ 01294545 |
| Տնօրեն__________ Կ.Փահլևանյան | Տնօրեն__________ Կ. Հակոբյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ. |

<< 12 >>  << 02 >>  2026 թ. կնքված
N  1  Համաձայնագրի
Հավելված 2
<<01>> 11. 2025 թ. կնքված
N ՍՀԱՊԱԾ-ԳՀԾՁԲ-2026-1/Մ  ծածկագրով գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայություն | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2026թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 2 | 79711130-2 | հսկողության ծառայություն | - | 330000 | 660000 | 990000 | 1320000 | 1650000 | 1980000 | 2310000 | 2640000 | 2970000 | 3300000 | 3960000 | 3960000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**«Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» ՊՈԱԿ**
Արմավիրի մարզ, գ. Արաքս
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900338000558
ՀՎՀՀ 04401986

Տնօրեն ____________________ Կ.Փահլևանյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Էլիտ Սեքյուրիթի» ՍՊԸ**
ՀՀ Արմավիրի մարզ, Կոմիտաս փ. 22տ.
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510066594955900
ՀՎՀՀ 01294545

Տնօրեն ____________________ Կ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ